Բացի դրանից պատուղների տեսական առհասարակ Անդրկովկասին բաւական վնասում են և բնիկ պատղաճառները, որոնք կերպարում են ժողովրդին՝ պատուղների գինը ցածացնելով։ Այսպէս օրինակ Ջաքամալի շրջանում, Թիֆլիսից 200 վերստ հեռաւորուԹեան վրայ պուդը 20—30 կոպէկով են առնում լաւ տանձն ու խնձորը, մինչդեռ Թիֆլիսում ծախում են 2 ռուբլի. իսկ Բորչալուի գաւառում, Թիֆլիսից 80 վերստ հեռու, ծիրանի առուր 9 կոպէկով են առնում։

Բնական է որ պարտիզպանը մի առանձին հոգ էլ չպիտի տանէ լաւ պատուղ հասցնելու առանձին խնամք տանելու, քանի որ ծառից նա տարեկան շատ-շատ 2—10 ր. է ստանալու, իսկ եԹէ լաւ հոգս տանէ, նոյնքան էլ ծախս պիտի անէ։

Մ ի ր ա ն.

(Վերջը միւս անգամ)

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՈՍԿՈՒԱՑԻՑ

II

—

Անցեալ նամակիս մէջ խորհրդածուԹիւններից յետոյ, այս անգամ ուզում եմ ընԹերցողներիս մի քիչ շրջել Մոսկուայի Թատրոններում։

Մայրաքաղաքների մէջ շատ Թատրոն լինելու պատճառով, Նրանցից ամեն մէկը կրում է առանձին դրոշմ, տալիս է որոշ պիեսներ, ունի իւր ընտրուածը, մինչև անգամ իւր սիրած հեղինակները։ Մոսկուայում կայ հինգ ուշադրուԹեան արժանի Թատրոն, որոնք են. Մեծ Թատրոն, Փոքր Թատրոն, Կորշ, Լենտովսկու, Պարադիզկի։ Արքունական Մեծ Թատրոնը օպերաների համար է. այստեղ վարձ կուտում են երկու կուսակցուԹիւններ։ Նրանցից մէկը պահանջում է, որ Մեծ Թատրոնը զբաղուի աւելի ուռս օպերաներով, իսկ միւսը, ամենևին հարկ չտեսնելով այդպիսի նախապատուԹեան, պահանջում է, որ աւելի շատ ներկայացուին օտար երաժշտագէտների օպերաները, որպէս աւելի հետաքրքիր և նշանաւոր օպերաներ, և կամ յամենայն դէպս, աւելացուԹիւն չտալ ոչ ուռս և ոչ օտար երաժշտագէտներին։ Այս տարի մեղ այնպէս է երևում, որ հակառակ մեր տարիներին, հետաքրքիրուԹիւն է պահպանուած բեմերատարի մէջ։ Մեծ Թատրոնում ժողովուած են, կարելի է ասել ուռաց նշանաւոր երգիչները. Մոսկուայի Մեծ Թատրոնի խմբի հետ կարող է մրցել միայն մեր աշխարհի Թատրոն։ Իսկ բեմի և առհասարակ չէնքի մեծուԹեամբ, կազմակերպուԹեամբ, դեկորացիաների գեղեցկուԹեամբ և հոխուԹեամբ այս Թատրոնը, կարելի է ասել, առաջինն է, խմբից ամենանշանաւորներն են և հասարակուԹեան սիրելի՝ Տ. Ֆօտրեմ (soprano) և Պլէօրրաժենսկի (տենոր)։

Այս տարի Մոսկուան ունի և երկրորդ օպերան, որի անունը, չըգիտեմ ինչու, Փրանսիական է։ Սա արդէն նահանգական բեմի տպատրուԹիւն է Թողնում։ Խմբի մէջ, բացի տենոր Շեվալեից, ոչ մի աչքի ընկնող անձ չկայ։ Իսկ սրա ձայնը իրաւ որ մեծ և գեղեցիկ ձայն է։ Այստեղ երգում են —զարմանալի խառնաշփոթուԹիւն—ամեն լեզուով՝ Փրանսերէն, ռուսերէն և իտալերէն։ Այդ, ի հարկէ, շատ է վնասում ընդհանուր տպատրուԹեան։

Ինչպէս և միշտ—այս տարի էլ Մոսկուայում կայ և օպերետ, Պարադիզկի Թատրոնում. այստեղ մեծ աջողուԹեամբ էր երգում պ Դաւիդովը (հայ)։ Պ. Պարադիզը սովորուԹիւն է արել ամեն տարի հրաւիրել իւր Թատրոնը օտարազգի, գլխաւորապէս գերմանական ժամանցի երևելի արտիստներին, ինչպէս Պոսսարտ, Բարնայ և ուրիշները։ Սրանց ներկայացումներն, ի հարկէ, միշտ շատ հետաքրքիր են լինում և կրԹիչ, որովհետև ներկայացնում են երևելի հեղինակների գրուածքները։ Պոսարտի, Բարնայի, Րոսսիի և Սալվինիի անուններն տալիս ամեն հայ միշտ յիշում է և հանգուցեալ Աբամեանին, ուստի ի դէպ է այստեղ յիշել, որ «Artiste» Գեղարուեստական-Թատրոնական ամսագիրը մտադիր է տալ մեր երևելի դերասանի պատկերը և փոքրիկ կենսագրական յօդուած։ Իրաւ է, յօդուածը բաւական ուշացած կըլինի, բայց՝ «լաւ է անագան, քան ԹՂ ոչ երբէք»։ Նոյնպէս լուր է տարածուել, որ Աբամեանին յարգողներից մէկը, պ. Բինգ, (գատական պատասխանատու օգնական) հրատարակելու է իւր յիշողուԹիւնները Աբամեանի մասին։ Պ. Բինգը, ասում են, մտադիր է եղել Աբամեանի հետ, ուստի նրա յիշողուԹիւնները, բացի հետաքրքիր լինելուց շատ օգտակար էլ կը լինի. այդ յիշողուԹիւնները դուրէ լոյս Տգեն Աբամեանի կեանքին վերաբերեալ մանր տեղերի վրայ։ Աշխի չէ ձգում, որ այդ յիշողուԹիւնների ձեռնարկուԹիւնը սկսում է մի օտարազգի և ոչ ԹՂ Աբամեանի մի որ և է հայրենակից։ ՄինԹէ հայերից միայն պ. Վ.ինն էր նրան լաւ ճանաչում, որ բացի նրանից, ոչ ոք ոչինչ չգիտէ Աբամեանի մասին։

Դառնանք դրամատէրն և կամեղեային և նրանց ներկայացուցչներին, արքունական Փոքր Թատրոնին և Կորշի Թատրոնին։ Վերջինս գլխաւորապէս կոմեդիաներ է տալիս և նման Պարիզի «Comédie Française» Թատրոնին, որտեղ Մոլիերի գրուածքները բեմերատարի պատկեր են կազմում, այստեղ էլ միշտ գրւում են ռուս կլասսիկական, մանաւանդ Գոգոլի և Օստրովսկու պիեսները, գոնէ շարաԹը մէկ անգամ։ Այստեղ կան շատ հետաքրքրող և տարանգաւոր դերասաններ և դերասանուհիներ, որոնք այս Թատրոնի սկզբնաւորուԹիւնից մինչև օրս չեն պատրաստում գրաւել հասարակուԹիւնը։ Սրա բեմերատարը բաւական հարուստ է. ամեն օրրաԹ օր (բենեֆիսների օրերը) ներկայացւում է մի որ և է նոր պիես. վերջերս այդ նոր պիեսների մէջ աչքի ընկաւ Զուդերմանի «Պատիս» անունով պիեսը, որի Նիլերը և շուշանած հարցը ընդհանուր մարդկային հետաքրքրուԹիւն ունին։

Աբքունական Փոքր Թատրոնը իւր

և իւր տեսակի մէջ աջողուած հրատարակուԹիւնը, որ մեր գաղրօցական—գրականական գործի համեստ, բայց անձնանուէր հիմնարարը վաստակաւորի, պ. Հ. Գուկասեանցի՝ աշխատուԹեան արդիւնաւէտ վաստակն է։

Պ. Հ. Գուկասեանցի կատարած գործի նշանակուԹեան մասին խօսելն աւելորդ է։ Եղիշէի անունը արդէն ինքն իրենից մի հատատի է, մի անտարակուսելի վկայուԹիւն։

Եղիշէ. ինչ հեշտ է այսօր այդ անունի արտասանելը, օրքան գիւրամատչելի են այսօր ամեն մի գրագէտի ականջին «Աւարայրի բլրուն» շրջապատող դայլայլկները, որ «զՎարդան երգէք ի վարդս կարմրիկ». կամ արդեօք այսօր մի բանասէր կամ ուսուցիչ, ուսումնարան կամ մատենադարան, որ օրքան էլ աղքատ լինին՝ չունենան հոգեակ Եղիշէի քաղցրազդուցիկ պատմուԹիւնը։ Որքան հրատարակուԹիւններ ունինք այսօր և ինչպէս դիւրագին։ Երջանիկ սերունդ։ Նախանձում եմ ես և ուրախանում, որ նրան անյայտ ու աներևակայելի են մեր կրած նեղուԹիւնները։ Նրա համար հայրենի դպրուԹեան ուսմանն ճանապարհները այնքան յարդարուել

---

*) Լ. Թուսկիեանցը մեր գասարանի առաջադէմ, պարկեշտ և աշխատասէր աշակերտներից առաջինն էր։ Նրա անունը Ա. Ղազգազեանցի, Բ. Թոմամչեանցի և Ց. Չիգեանեանցի անուններին հետ ոսկեզոծ տառերով գրուած էր գասարանի պատից կախուած կարմիր տախտակի վրայ։ Այս կարգը մոցրել էր հանգուցեալ Ղազարոսպեանցը իւր կարճատև, բայց Ներսիսեան դպրոցի լաւագոյն շրջանը յիշեցնող տեսչուԹեան ժամանակ։ Նրանից յետոյ վերացաւ։

եԹէ ասեմ, որ բոլոր քաղաքը տակն ու վրայ արին և Թիֆլիսի նման քաղաքում չՀարեցին վէնեաիկի հրատարակուԹեան մի օրինակ, որ բաւն ուսուցչը նախապատուԹեան էր տալիս Ալեքսանդրեանի առաջ։ Այս պատմուԹիւնը գուցէ այսօր առասպել համարուի, բայց սա սուրբ իրողուԹիւն է։ Ձեմ յիշում, որի, ընտրուԹիւնն էր Եղիշէն՝ վարժապետի Թէ աշակերտի. բայց որին էլ որ լինէր՝ նման պատմուԹիւնը գուցէ լոյս Տգեն Աբամեանի կեանքին վերաբերեալ մանր տեղերի վրայ։ Աշխի չէ ձգում, որ այդ յիշողուԹիւնների ձեռնարկուԹիւնը սկսում է մի օտարազգի և ոչ ԹՂ Աբամեանի մի որ և է հայրենակից։ ՄինԹէ հայերից միայն պ. Վ.ինն էր նրան լաւ ճանաչում, որ բացի նրանից, ոչ ոք ոչինչ չգիտէ Աբամեանի մասին։

Դառնանք դրամատէրն և կամեղեային և նրանց ներկայացուցչներին, արքունական Փոքր Թատրոնին և Կորշի Թատրոնին։ Վերջինս գլխաւորապէս կոմեդիաներ է տալիս և նման Պարիզի «Comédie Française» Թատրոնին, որտեղ Մոլիերի գրուածքները բեմերատարի պատկեր են կազմում, այստեղ էլ միշտ գրւում են ռուս կլասսիկական, մանաւանդ Գոգոլի և Օստրովսկու պիեսները, գոնէ շարաԹը մէկ անգամ։ Այստեղ կան շատ հետաքրքրող և տարանգաւոր դերասաններ և դերասանուհիներ, որոնք այս Թատրոնի սկզբնաւորուԹիւնից մինչև օրս չեն պատրաստում գրաւել հասարակուԹիւնը։ Սրա բեմերատարը բաւական հարուստ է. ամեն օրրաԹ օր (բենեֆիսների օրերը) ներկայացւում է մի որ և է նոր պիես. վերջերս այդ նոր պիեսների մէջ աչքի ընկաւ Զուդերմանի «Պատիս» անունով պիեսը, որի Նիլերը և շուշանած հարցը ընդհանուր մարդկային հետաքրքրուԹիւն ունին։

Աբքունական Փոքր Թատրոնը իւր

դերասանական այժեւով առաջինը և օրինակելին է համարւում ամբողջ Ռուսկայում։ Ոչ մի թատրոնում մեսսին չեն ժողոված այսքան տաղանդաւոր և առաջնակարգ դերասաններ և դերասանուհիներ, որսպէս այս թատրոնում։ Ֆեդոտովան, Երմոլովան, Լենսկին—յայտնի են բոլոր Ռուսկայնին և անձանօթ չեն Կովկասին. բացի սրանցից, Պռաւդին, Իժին, Մռւզել և ուրիշներ, որոնք նոյնպէս տաղանդաւոր և հասկացող դերասաններ են. չլիշեցի դեռ մի քանի դերասանուհիներին և դերասաններին, որոնք վերջին ժամանակներս են միայն հրաւիրուել։ Աչսպիսի անսամբլով վատ պիեսն էլ աջողուելիւն կունենայ։ Այդ և փորձով տեսնում ենք. Վ. Կրկլովը գրեթէ ամեն շաբաթ նոր պիես է թարգմանում,—որովհետև, նայելով նրանց պատրաստութեանը, միշտ լաւ են անցնում, մինչև անգամ աջողութիւն են ունենում։ Փոքր թատրոնի բեսերատուարն աւելի բազմազոյնի է, քան Մեծ Կոշկի թատրոններինը։ Այստեղ ռուսաց կոմեդիաների հետ զուգընթաց նոր ներկայացում են և օտար ազգերի երեւելի հիւրընակների գրուածքները, և ոչ միայն կոմեդիաները, Շեկսպիրն, Հիւգոյն, Շիլլերի անմահ գրուածքները յայտնուում են այս բեմի վրայ. անձանօթ չեն այս թատրոնին և Իբսենի գրուածքները, որոնք վերջին ժամանակներս մեծ ազմուկ են հանել։

Սառնով կամենում էր վերջ դնել իմ «առաջաբանիս», երբ յիշեցի «Սիմոռա» («Խեղկատակ») թատրոնը. սա դուռ էժանագին ժողովրդական թատրոն է. այդ արդէն գոյ պէսք է ասէ, մեծ ընդունելիւն է կրում հանրութեան։

Ասացի «առաջաբանիս», որովհետև այս նամակիս նպատակն էր միայն բնդհանուր կարճառօտ կերպով գաղափար տալ տեղիս թատրոնների մասին։ Իսկ միւս նամակիս աւելի մօտ կըմանօթացնեմ այդ թատրոններից ամեն մէկի հետ առանձին, աւելի մանրամասնօրէն խօսելով՝ մեծ նրանց ուղղութեան, մեծ դերասանների և մեծ պիեսների մասին։ Մէկ վոքրիկ լուր թատրոնական-երաժշտական կեանքից. այժմ այստեղ է երեւելի երաժշտագէտ Զայկովսկին։ Մեծ թատրոնում տալիս են նրա նոր օպերան՝ «Пиковая дама», որ մեծ աջողութիւն ունի։

Ի վերջոյ մի վիճակագրական տեղեկութիւն տանք, մեծ այստեղի թատրոններում յաճախողների մեծ ը որքան է եղել անցեալ հոկտեմբեր ամսուայ ընդհանրքում.

Մեծ Թատրոնում	37,593	հոգի
Լենտովսկու (օպերա)	4, 300	»
Պատպռկի	19,376	»
Փոքր Թատրոնում	22, 924	»
Կոշկի	31,329	»
Սկոմոռոխի	20,642	»

Մ ի ն ա ս.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՈՅՓՂ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

—

Նոյեմբերի 17-ին Պետերբուրգում կայացաւ սովորական երեկոյթը. մասնակցութեամբ մի քանի նշանաւոր դերասանների և դերասանուհիների։ Թէպէտ երկու շաբաթ միայն ժամանակ էր որոշուած երեկոյթը լիակատար անելու, որը և հարկէ, շատ կարճ, բայց չնորհիւ ուսանողների, որոնք ոչ մի ջանք չխնայեցին այդ երեկոյթին միայն տալու համար, շատ աջող անցաւ և միանգամայն լաւ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրայ։ Որովհետև երեկոյթը բարեգործական նպատակով էր արւում, ինչպէս ամեն տարի, ուստի ուսանողները ծախքերը չափաւորելու համար ամեն պարտաւորութիւն իրենց վրայ էին առել. խօսքս պարզելու համար յիշեմ մի օրինակ, որն իսկապէս կըպարզէ ասածս. ամիչնները ցրուելու ծախքից փախչելու համար հէնց իրենք ուսանողներն էին բաժանում խանութներին։ Պէտք է յիշեմ, որ նշանի Նիկոլսկոյում Ամառանոցին, որպէս վիճակաւոր, առաջնորդում էր ուսանողներին և ինքն էլ կարողութեանը չափ աշխատում էր նպաստ երեկոյթի պայծառութեան։ Պարոնը ոչ միայն այդ երեկոյթին այլ և ամեն մի բարեգործական գործում պարագլուխ է հանդիսանում, որ ի հարկէ պատիւ է բերում նրան։

Ժողովարանի մուտքը, դահլիճը և միւս սենեակները զարդարուած էին գորգերով։ Տիկին Սաւինան այդ երեկոյ ծրագրները վաճառելու պարտաւորութիւնը իւր վրայ էր առել, բայց ըզժրախտաբար հէնց այդ երեկոյ մասնակցում էր Աղեքսանդրեան թատրոնում, ուստի չկարաց ծրագրները վաճառելու. նա եկաւ ժամը 11-ին, քաղցրանալով և գինի վաճառելու համար. սակայն այդ երեկոյ հազուագիւտ էր Կովկասեան Ճաշակով։

Ժամը ութին արդէն ժողովարանը (Благородное собраніе) լի էր բնաւոր հասարակութեամբ ամեն ազգութիւններից և անհամբեր սպասում էին վարագոյրի բարձրանալուն։ Սկսուեց դաւեւոր մասնակցութեամբ, ինչպէս վերևիլիշեցի, նշանաւոր դերասանների և դերասանուհիների, որոնց ժողովուրդը ընդունեց բուռն ծափահարութեամբ։ Ջաւեչոից յիսուն հոգուց նկարիչ պարոն Կարագինը մի կենդանի պատկեր դրեց Կովկասեան կեանքից, որի ժամանակ երգեցիկ խումբը սիրողներից կազմուած, երգիչ պ. Յարուլիւնն Պապովիանի վերնվարութեամբ երգեց. երգեցողութիւնից յետոյ Թատրի դահլիճ Ձայնը հնչեց բեմից և վերջացաւ կովկասեան պարերով։ Կենդանի պատկերից յետոյ, սկսուեցին եւրոպական պարերը խառն կովկասեան պարերի հետ և երեկոյթը վերջացաւ ժամը 3-ին միանգամայն լաւ տպաւորութեան տակ թողնելով հանդիսականների։

Բ. Թումանեանց.

20 Նոյեմբերի,
Պետերբուրգ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ, 23 Նոյեմբերի.— Անցեալ օրը կայացան քաղաքիս 2 դերասանների բնաւորութիւնները. աւելորդ չենք համարում կարճ պատմել բնաւորութիւնների եղանակի մասին։ Դերասանները բնաւորելու համար անպատճառ 100 հայ և 200 Թուրք պէտք է ներկայ լինին բնաւորութեան, որպէս բնաւորները, պարտ չէ կարելի առնմանուած Թուրից, բնդհակառակը, սովորաբար ասելին է պատահում։ Բնաւորութիւնների մասնակցում են օրէնքով քաղաքի չափահաս, հարկատու բնակիչները։ Բէկերը, խաները, պետական ծառայութեան մէջ գտնուող քաղաքացիները երբեմն չունեն սոյնօրինակ բնաւորութիւնների մասնակցելու, որովհետև հարկերից՝ Թէ քաղաքային և Թէ ազգութեան (ոսկու վազ չեն տալիս) ազատ են։ Նոյնպէս ձայնատուութեան իրաւունք չունեն պատարանով մեզապրծածները, որք և այլն կանայք Թէև հարկատու են, որչափ էլ ազգատ լինին, ձայն տալու իրաւունք չունին։ Բնաւորութիւնները կատարուում են գաւառապետի կամ նրա օգնականի և կամ պրեստաւների ներկայութեամբ։ Բնաւորութիւնից առաջ հայ քահանան երդուեցնում է հայ բնաւորողներին, իսկ մոլլան Թուրք բնաւորողներին, իւրաքանչիւրը առանձին, որպէս զի բոլոր բնաւորողները արդարութեամբ, խղճով, առանց անձնական շահերի ձայն տան կամ «քար գցեն» (քուէարկեն)։ Դերասանները բնաւորում են մեզանում 1 տարով. 1 դերասան հայ պէտք է լինի, միւսը Թուրք։ Իւրաքանչիւր դերասան կամաց բնաւորում է մէկ կանոնաւոր կամ օգնական։ Գաւառական վարչութիւնը ուղարկում է սրանց հաստատութեան Թղթերը նահանգական վարչութիւնը, որ և հաստատում է։ Դերասաններն էլ իրենց կողմից բնաւորում են մի մի հարկատու։ Սրանից հետևում է, որ դերասանների գործը առանձին դժուարութիւններ չէ ներկայացնում։ Ձայնատուութեան կամ քուէարկութեան ժամանակ ամենքը հաւասար են Թէ հայ և Թէ Թուրք, հարուստ Թէ աղքատ, հայ բնաւորը ձայն է տալիս և հայ և Թուրք բնաւորելիների համար, Թուրքն էլ «քար է գցում» և հայ և Թուրք կանոնաւորներին։ Որպէսզի դժուարութեամբ են կայանում սոյնպիսի բնաւորութիւնները մեզանում,—այդ անտեսի է։ Մեր հայերը մանաւանդ անփոյթ են դէպի հասարակական գործ. դէպի քաղաքային առօրեայ մի հարց։ Ամբողջ օրը գրեթէ պրեստաւները, կալանները և քաղաքապահները, նոյն իսկ գաւառապետի օգնականը և հրամայում են և խնդրում են Թէ հայ վաճառականին Թէ Թուրք մտամաքառնին գնալ ժողովատեղին։ Այնուամենայնիւ չատերը չեն բարեհաճում գալ։ Մէկ բնաւորական քաղաքանոպարչի կեղտոտ բազը, որ լցուած էր անասունների գաղշահոտ ապրով, կազմում էր ժողովատեղին։ Ժողովը բացուելուց էր և խիստ ազմկալի։ Թուրք հասարակ գործակատարը անդադար գոռում էր, փախիններն օձն էր գցում, իւր բնաբերելիներին էր ձայն տալիս, մինչդեռ հայերը մի կողմ էին քաշուել, կարծես չէին մասնակցում և իրը հետաքրքրուղներ լինէին։ Կարելի է ասել, որ հայ պետատուտին (քաղաքագլխին) էլ Թուրքերն բնաբերելին։ Բնաւորութիւնը տեւեց 2 օր. առաջին օրը միայն ձայն բնաւորուեց երեսատորդ մասնաւոր հաւատարմատար պ. Սաեփան Կարապետեանցն։ Երեկոյ էր, երբ ժողովը ցրուեց։ Միւս օրը բնաւորները կրկին հաւաքուեցան Թուրքերից պետատուտ բնաւորելու։ Թուրքերը կուսակցութեան էին բաժանուել. 1 մասը ցանկանում էր նախկին պետատուտին (որ բէգ է), միւս և մեծ մասը ձայն էր տալիս մի Թուրք վաճառականի, որ և քուէարկութեամբ,—255 ձայնով,—պետատուտ բնաւորուեց, մինչդեռ նախկին պետատուտը ստացել էր 138 ձայն և ևն։

Յայտնի է, որ ոչ Թէ մեր, այլ և Անդրկովկասի ներքաղաքային գաւառական քաղաքի պետատուտները (նոյնպէս և գիւղական մէկիքները և տանուտէրները) ոսկի չեն ստանում ոչ կառավարութիւնից, ոչ էլ քաղաքի բնակիչներից։ Սակայն, մեր կարծիքով, նրանց ոսկի նշանակելը շատ կը լինէր. տարեկան 400—600 ռուբլի. այն ժամանակ նրանք առաւել բարեխղճով կկատարէին իրենց ստանձնած պաշտօնին, աւելի մեծ սէր և եռանդ ցոյց կըտային իրենց գործի մէջ։ Բայց ազգի զարգացման մէջ, ոչ սակաւ մարդկի ձգտում են պետատուտի պաշտօնին կամ իրենց ազդեցութիւնը տարածելու կամ ժողովրդի հաշուով ապրելու. այդ դէպքումն էլ պետատուտի պաշտօնը մի անպիսի գործ է դառնում։ Հարկաւ, պատահ չեն միշտ և այնպիսի յատկութեամբ մարդիկ, որոնք ասում են. «պետատուտները, եթէ ոսկի էլ ստանան, էլի կուտեն ժողովրդից, գանազան վատ ձանապարհներով, «հեմռուանները» կըման գան։ Մենք հաւատացած ենք, որ այդ չի լինիլ։ Քաղաքային գործարկի մասին, Թէ ոչ պատ նա գործ ունի, ինչ բանի է գործադրւում. հարկերի և հարկատուութեան չափի մասին ևս խիստ մեծ գործառ ունին։ Իսկ գիւղացու հարկերի և առհասարակ անհատական վիճակի նկատմամբ մեր հայ ազգարնակութեան հասկացող—ինտելիգենտ մասը ոչ գիտէ, ոչ էլ ուզում է լսել և իմանալ։ Ուրեմն հայ բնակիչները ոչ իրենց են ճանաչում, և ոչ իրենց հայրենակից եղբայրներին,—գիւղացիներին, ասել է, որ ոչ տնտեսական և ոչ մտերմական կապերի մասին այստեղ խօսք լինել չէ կարող։

Քաղաքային գործարկը, որչափ մեզ է յայտնի, մօտ 2 հազար ռուբլի գումար ունի, այստեղ առանձին մի բան շինելու ծրագիր չկայ տակաւին, այլ, մեր կարծիքով, անհրաժեշտ է քաղաքի միջից անցնող գետի վրայ կապած 2 կամուրջները նորից շինել և կամ նորզել։ Յանկալի է նոյնպէս, որ նորընտիր դեպետատուտները չէ Թէ աւելացնէին լապտերների Թիւը փողոցներում, այլ գէթ եղածները գիշերները լուսաւորել տային։

Ա. Ե.

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

«Daziel»-ի գործակալութեան ասելով, Պարիզում Թեհրանից սեղեկութիւն է ստացուած, որ պարսից շահը սերբևացոց նախկին Թագաւոր Միլանին երբ Թէ պարսից հեծելազօրի գլխաւոր հրամանատար է նշանակել. Միլանը չուտով Պարսկաստան է ուղևորուելու, որտեղ չուտով կը սկսի վերակազմել պարսից հեծելազօրը։

— Կ. Պոլսից օտարերկրեայ լրագիրները հաղորդում են, Թէ Թիւրքիայի և Ֆրանսիայի մէջև պայմանագիր է հաստատուած, որով սուլթանը Ֆրանսիային է զիջում Աթաբատանի հարաւարևելեան անկիւնում գտնուած մի բաւական նշանաւոր հող, որ յայտնի է Շէյխի հրուանդան անունով։ Սուլթանը եգիպտական խնդրի վերաբերմամբ անգլիացիների դէմ բարկացած լինելու պատճառով է երբ Թէ այդ հողը պարտաճանաչ Ֆրանսիային զիջեր։

—Վերջանիայում լոյս է տեսել Վիլհելմ կայսրի քարոզների ժողովածուն, որ նա իբր Ժոլային ուղևորութիւնների ժամանակ խօսել է չոգենաւի վրայ։ Ժողովածուի վերնագիրը հետևեալն է. «Die Stimme des Herrn auf den Wassern»։ Քարոզները խմբագրել է զօրքի գլխաւոր քահանայ Ռիխտերը։

—«Standard» լրագիրը հաղորդում է, որ չինական կառավարութիւնն իրեն անդոր է համարում չընդունել կայսրութեան մէջ տարածուած յեղափոխական շարժումը և, ինչպէս չատ նշաններից երևում է չուտով Անգլիային, Գերմանիային և Միացեալ Նահանգների օգնութեանը կը դիմէ։

—Աւստրիական լրագիրներից մէկը ի մի է խմբել եւրոպական զեկավարող անձերի խաղաղասիրական հաւատիացումները հետևեալ կերպով. Ռուսիան, նոյեմբերի 9-ին. «Ես չոյս ունիմ, Աստուած չի Թոյլ տայ, որ եւրոպային պատերազմի պատիժ հասնէ։ Ես խորին կերպով համոզուած եմ և մինչև անգամ երաշխաւորում եմ, որ պետերը իրենց գործերի մէջ զեկավարում են մեծ չափաւորութեան և իմաստութեան ոգին»։

Սալսբիւրին, նոյեմբերի 9-ին. «Ներկայումս Հորիզոնի վրայ ոչ մի աննշան ամպ անգամ չէ երևում, որ խաղաղութեանը մի օր և է վտանգ սպառնար»։

Կայնոկին, նոյեմբերի 14-ին. «Ինձ կատարելապէս չոյսնի չէ քաղաքական ոչ մի խնդիր, որ ուղղակի առիթ տար երկիւղ կրելու, Թէ երկարատև խաղաղութեանը վտանգ կը հասնէ»։

Ռիբոն, նոյեմբերի 26-ին. «Ոչ ոք չէ տարակուսում, որ Ֆրանսիայի և Ռուսիայի իրար բարեհամբանալը խաղաղութեան նոր գրաւական է։ Մեծ մասամբ այն տպաւորութիւնն է իշխում, որ ներկայումս խաղաղութիւնն աւելի լաւ է ապահովուած, քան երբ և իցէ»։

Կապրիվին, նոյեմբերի 27-ին. «Ոչ մի պետութիւն ներկայումս չէ ցանկանում սպառնալ չարութեանիւ Կրոնշտադի անցքերի չնորհիւ Ֆրանսիացոց ինքնահաւանութեան մակերևոյթը բարձրանալու մէջ մեզ համար ոչ մի վտանգ չէ Թաքնուած»։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սոխի խաղ.—Ամերիկայում մի նոր խաղ է մոդա դարձել, որ կոչւում է «սոխի խաղ»։ 6 ջահէլ կոնպայք մանում են հարևան սենեակը և նրանցից մէկը սոխ է կծում։ Դրանից յետոյ նոյն սենեակին է մանում մի երեսաւորդ, որ պէտք է բոլոր կանանց հերթով համբուրէ և իմանայ, Թէ նրանցից որն է սոխը կծել։ Եթէ երեսաւորդն այդ առաջին անգամ չի իմանայ, երկրորդ կ՚անցնի երրորդին և այլն, մինչև որ նա վերջ ի վերջոյ իմանում է, Թէ ով է սոխը կծել։

Կատազած մեղրին կանդնեցնելու համար մի ամերիկացի մեղու է գտել։ Դա մի ձող է, որ մի ծակով մեզացած է կատարեալ նմանութեան վրայ սեղաւորուած էլէքտրական գործիքի հետ, իսկ միւսով մեղու քիմածակերի հետ։ Հենց որ մեղն կրկատպէ և կսկսէ վազել, բաւական է, որ կատարողը սեղմէ էլէքտրական գործիքի զսպանակը։ Էլէքտրականութեան հոսանքը կբերի մեղու քիմածակերին և մեղն անմիջապէս կանգ կառնէ,

Օտարազգի ամուսնութիւն է կայացել այս օրերս Ամերիկայի նահանգներից մէկում. փեսացուն 124 տարեկան է, հարսնացուն 81 տարեկան։ Նրանք իրար հետ ծանօթացել են բանուորական տան մէջ, հաւանել են իրար, նրանուել են և պսակուել։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒԱՆՏԱՅԻՆ ԴՈՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 նոյեմբեր. – Երէկ, Գէորգիևսկի ասպնջ, Զմեռային պալատում ճաշ կար միայն հաստարակ զինուորների համար, բայց ամեն տարի արուող հանգիստը ճաշը չկար։

Բարձրագոյն պալատում բոլոր պարահանդէսները բարձուած են։

Մեծ Իշխան Գէորգի Ալէքսանդրովիչը անթերութեանից վճռաւորների օգտին 5,000 ր. նուիրեց։

Ֆինանսների մինիստրութիւնը պետական խորհրդին մի ծրագիր է առաջարկում, որով 10 հոգուց պակաս բանուոր չունեցող գործարանների, գործատների և արհեստանոցների բանուորների կեանքը պարտադիր կերպով ապահովելու համար պետական դրամարկղ պէտք է հիմնուի։ Բանուորների կեանքը պէտք է ապահովին տէրերը։ Փոչակ տանելու երաշխք տանում են ժժրաքար դէպքերի պատճառով աշխատանքի անընդունակ դարձած բանուորները. ժժրաքար դէպքերի պատճառով մեռած բանուորների այրիները երբև Թոշակ տանում են աշխատանքի վարձէ 50%, իսկ տղայքը մինչև կատարեալ հասակ գտնալն և աղջիկերքը մինչև ամուսնանալն տանում են 20 և 15%։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ մբատագրութիւն կայ մինիստրութիւնների նախահաշիւների կազմելը փոքր ինչ չատացնել, համարեա բոլոր վարչութիւնները, երկոց սեպհական նախաձեռնութեամբ, սահմանափակել են ամենանչքաժեշտ պահանջները, և նկատի ունենալով տարուայ ծանր պայմանները,

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 նոյեմբեր. – «Гражданинъ»-ը լսել է, որ հաստարակական չինութիւնների համար առ այժմ 10 միլիոն ր. է նշանակուած։

Երէկ Պատչինոյում Ֆրանսիական նոր դեսպանը հանդիսաւոր ընդունուեցաւ Գատչինայում Կայսրին յանձնեց իր հաւատարմագիրները։

Սինոսի երկրորդ դեպարտամենտի աւագ դատախազ Վորեմիկինը արգադատութեան մինիստրի օգնական է նշանակուած։ Պետական կալուածների երկրագործական դեպարտամենտի տեսուչ Տիխկևը նշանակուած է նրա մինիստրութեան ընդհանուր գործերի դեպարտամենտի տեսուչ, որին յանձնում է ընդունել այդ դեպարտամենտներից առաջնի ժամանակաւոր կառավարութիւնը։

Պատասխանատու խմբ. Մ. ԱՐԵՂԵԱՆ
Հրատարակիչ՝ Ս. ՍԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Անդրկովկասեան երկաթուղի

Գնայք Թիֆլիս գալիս է

Բաքուից,	պոստ.	11 ժ. 8 ր. եր.
Բաղուից,	«	7 ժ. 40 ր. առ.
Բաքուից,	մար. ապ.	8 ժ. — ր. առ.
Գանձակից,	»	8 ժ. 20 ր. եր.

Գնայք Թիֆլիսից գնում է

Բաքուի,	պոստային.	8 ժ. 40 ր. առ
Բաղու,	»	12 ժ. 8 ր. գիշ.
Բաքուի,	մար. ապ. գն.	3 ժ. 10 ր. ցե
Գանձակ,	«	9 . ժ 45 ր. առ,

II Անդրկասպեան երկաթուղի

Ուզուն-Աղայից գնում է 6 ժ. 40 ր. ր.
Ուզուն-Աղա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ուզուն-Աղայից գնացքը գնում է և գալիս երեքշաբթի և չաբաթ օրերը։

Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երեքշաբթի օրերը։

I Բօստով-Վլադիկաւկազի երկաթ

Վլադիկաւկազից գնում է 9 ժ. 30 ր. առ.
Բոստով գալիս է 8 ժ. 48 ր. առ.
Բոստովից գնում է 7 ժ. 28 ր. ցեր.

ԾԱԾՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իսկական գործար. միայն այս դրոշմանիշով է։

„ՄԻ ՀԱՉԻՐ“

Մեղ ա-բուժէն մալց-էքսթրակտ և շաքարեղէն

Լ. Գ. ՊԻՏԵ ԵԻ ԸՆԿ. ԲՐԵՍԼԱՒԻՄ։

Քիմիական վերլուծութեամբ և բժշկական փորձերով հաստատուած է, որ յամենայն դէպս դրանց մէջ ածուխաթթուն ինքնակար ոչ մի նիւթ չէ մտնում, ուստի դրա ներմուծումն և վաճառումը Ռուսիայում թոյլ է տրուած։

Գները՝ չիչը 1 բուլ. և 2 բուլ. 40 կոպ., Նաքարեղէնները 30 և 50-ական կոպ.։

Փաթաթելու և ուղարկելու համար առանձին են վճարում։

Գլխաւոր պահեստը Ռուսիայի համար

Վ. ԱՈՒՐԻԽԻ մօտ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Կալոմնայա 18/19

Վաճառւում է Ռուսիայի բոլոր ղեղատնային խանութներում և դեղատներում։

(Մ.) (2) 16—4

ՄԱԶԵՐՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա. ԷՆԳԼՈՒՆԴԻ ՓՈՓԱԼԻՍ

ԷՅԿԱԼԻՊՏԻ ԲԱԼԱՍԱՆ

Մազերն ամրացնելու գարման. ոչնչացնում է թեփը և թարմացնում է գլխի մորթը։ Մի սրուակի գինն է 1 ր. 50 կ., ճանապարհածախքով —2 ր., 2 սրուակինը՝ ճանապարհածախքով —3. 50 կ.։

Կեղծիքից զերծ մնալու համար, խնդրում եմ պահանջել ամեն մի դրոշմաթղթի վրայ Ս. Էնգլունդի ստորագրութիւնը՝ կարմիր թանաքով գրած Ս. Պետերբուրգի կոսմետիքական լաբորատորիայի մարկը։ Գլխաւոր պահեստն է Պետերբուրգ, Ս. Էնգլունդի Պետերբուրգի կոսմետիքական լաբորատորիա, Լիտէյնայա, № 38։

(Մ). 10—4.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

Հոգաբարձական խորհրդարանում 1891 թուի, դեկտեմբերի 4-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է երկրորդ անգամ ա-ճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու նոյն դպրոցի կալուածքը № 46 և. № 49 (ընդամէն հանգուցեալ Յարութիւն Օքոյեանցից), որ գտնուում է Կուր գետի հեղեղատի (սաղի) վրայ։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը։

(246) 3—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

Հոգաբարձական խորհրդարանում դեկտ. 4-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ա-ճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու Ներսիսեան հին դպրոցի ներքնայարկի 36 կրպակները հանդերձ նկուղներով և առւտրատնով։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից առաւօտեան 10 ից մինչև 12 ժամը։

(246) 3—3

1892 թ. յունուարից լոյս կը տեսնէ ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“

վերնագրով մանկավարժական ժողովածուն տարեկան երկու հատորով։ Հրատարակչին կարելի է դիմել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Набережная улица, № 11.

Հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

(Փ.) 2—2.

ԿԵՕԼԵՐԵՆ ՔԱՑԱԽԻ ԷՍՍԵՆՑԻԱՆ

Իր աչքի ընկնող լաւ որակութեամբ յայտնի, իսկական

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՔԱՑԱԽԻ ԷՍՍԵՆՑԻԱ վինչևայս ժամս է ամենալաւ, ամենաօգտաւէտ

ԵԻ Ա.ՄԵՆԱՀԱՄԵՂԸ և այդպէս էլ կը մնայ առաջիկայում։

Իսկ ի նկատի ունենալով նրա բազմաթիւ խարդախութիւնները, պէտք է ուշադրութեան առնել գնողների շահերին հակառակ այն բոլոր նպատակները, որ ունին առհասարակ յայտնի վատ որակութեան արգիլանքների խարդախողները, և ԿԵՕԼԵՐԵԱՆ ՔԱՑԱԽԻ ԷՍՍԵՆՑԻԱ գնելիս զգուշանալ, որ ԱՅՍ ԱՌՈՂՋ ԵԻ ՀԱՄԵՂ ՀԱՄԵՄՈՒՆՔԻ տեղ մէջը խիստ շատ խառնած, լաւ քացախին ոչ յատուկ անախորժ համի բնափայտի քացախի թթուտ չտան։

Պահանջել ոչ թէ միայն սրուակի վրայ Ֆիրմայի էտիկետը Ք. Կեօլերի ստորագրութեամբ, այլ և անպատճառ խցանի միջից անցկացրած թելի վրայ ֆիրմայի պլոմբը։

Վաճառւում է գաւառներում բոլոր ամենալաւ մագազիններում

(Մ.) 5—4.

ԺԻՐՕԴԵԼ ՊԱՍՏԻԼՆԵՐ

ՆՈՐՎԷԳԻԱՑԻ ՄԱՔՈՒՐ ՁՐԻՑ ՊԱՏՐԱՍՏԱԾ

ՆԵՐԴՈՐՇՈՒՄ Է ՆԵՐՇՆՉԵԼՈՎ ԵԻ ԿՈՒԼ ՏԱԼՈՎ

Գերազանցում են այն դեղատներին և քաղցրեղէններին, որոնք ծանրացնում են ստամոքսը և ներգործութիւն չեն ունենում չնչառական գործարանների վրայ։

ԺԻՐՕԴԵԼԻ ՊԱՍՏԻԼՆԵՐԸ



միակ կատարեալ պատրաստութիւնն են, որ պարզև են տացել 1878 թ. Պարիզի համաշխարհային ցուցահանդէսում միջազգային դատաւորներից։

ԴՏՆՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ։

Ամեն մի արկղիկում կայ 72 պաստիլ, գործած ի Թան եղանակի բալասարանով։

ՎԱՃԱՌՈՒՄ Է ՄԵՆ ԲՈՒՆԱԿՈՒԹԵԱՄԲ.

L. GÉRAUDEL,

Pharmacien à Sain Meuehould, France

Պահանջել գործատիրոջ ընդունած կնիքը։

Այդ պատրաստութիւնը ծծելիս չնչած օդը լցուում է կալպի գոլորշիներով և օդի հետ գնում է ուղղակի հիւանդ տեղերը։ Ներգործութեան այս յատուկ եղանակով, և միևնոյն ժամանակ էլ իրեն բալասարանով, այդ պատրաստութիւնն օգնում են այն ամեն դէպքում, երբ խորտակած են տալիս կոպը գործելու։

Վաճառւում է Թիֆլիսում գաւառային ապրանքի Կալկաեան ընկերութեան մէջ։

Պահանջել գործատիրոջ կնիքը։

(Մ.) 12—2

Дозволено цензурою. Тифлисъ, 29 го Ноября 1891 г. Տպարան Կաւկազ լրագրի գրատենակի Типографія конторы газеты Кавказъ Гол. пр., домъ Читахова